ՎԻՄԱԳՐԱԿԱՆ

ԽՈԶՆԱՎԱՐԻ ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Խոզնավար գիւղի վիմագրական ժառանգութեան ուսումնասիրութիւնը դուրս է մնացել ուսումնասիրողների տեսադաշտից։ Սոյն յօդուածի նպատակն է դաշտային, արխիւային եւ մատենագիտական նիւթերի հիման վրայ ներկայացնել գիւղի համառօտ պատմութիւնն ու պատմական յուշարձանները։ Խոզնավարը (յայտնի նաեւ՝ Խազնավար, Խանձաբերդ, Խզնավար, Խոզնավուր անուններով), գտնւում է ՀՀ Սիւնիքի մարզում, Գորիս քաղաքից 11 կմ հիւսիս։ 1490 թուականին արտագրուած մի ձեռագրի յիշատակարանում այն ներկայացւում է որպէս Սիւնիքի Աղահէճքի մասը կազմող Քաշաթաղ գաւառի գիւղերից մէկը։ Տաթեւի վանքի նոր հարկացուցակի համաձայն վանքին տալիս էր 4400 դահեկան պտղի հարկ[1]։ Գիւղը բազմաթիւ անգամներ ենթարկուել է ասպատակութիւնների, այսպէս. «1913 թուի Մարտի 16-ին քոչուոր թարաքամա ցեղն անսպասելի յարձակւում է գիւղի վրայ, կողոպտում։ Նրանք յափշտակում են նաեւ Սբ. Ստեփանոս եկեղեցում պահպանուող 200-ից աւելի հնագոյն գրչագրեր եւ վառում»[2]։ Գիւղի մասին հնարաւոր եղաւ տեղեկութիւններ գտնել նաեւ մամուլի էջերում՝ թղթակցութիւնների տեսքով, որտեղ գիւղն ունի հետեւեալ նկարագիրը. «Գիւղացոց մեծ մասը գաղթականներ են. նրանք գաղթել են Փոքր Սիւնիքի (Ղարաբաղ) և Մեծ Սիւնիքի զանազան գիւղերից, օրինակ Յարութիւնեանները գաղթել են Տիզակից, Մէլիք-Եգանեան ժառանգութիւնից զրկուելով... Այդ գիւղի եկեղեցին վկայում է, որ մի ժամանակ ունեցել է իւր ծոցում հարազատ հայորդիներ...»[3]։ Յօդուածագիրը նշում է, որ ժամանակին գիւղը պատկանելիս է եղել Սուլթանեան բէկերին։ Նրանք ցանկացել են հպատակեցնել գիւղացիներին, սակայն Յարութիւնեանների յամառ ջանքերի շնորհիւ գիւղն աստիճանաբար ազատուել է նրանցից։ Հայաստանի ազգային արխիւում պահպանուած Խոզնավար գիւղի ծխամատեաններից մէկում գրառումներ կան վերը նշուած Սուլթանեան բէկերի մասին. «Подвластные Асадь Султан Гамза»[4] ենթավերնագրի տակ ներկայացւում է գիւղացիների ցանկ, ովքեր ապրում էին նրանց ենթակայութեան տակ։ Անդրադառնալով գիւղի վիմագրական ժառանգութեանն ու յուշարձաններին՝ նշենք, որ Խոզնավարի տարածքում պահպանուած հնագիտական յուշարձաններն են.

1. *Գիւղից 700 մ հիւսիս արեւմուտք գտնուող դամբարանադաշտ (Ք. ա. 1 հազ.);*
2. *Սբ. Մինաս եկեղեցի (1675 թ.);*
3. *Սբ. Հռիփսիմէ եկեղեցի;*
4. *Խաչեր կոչուող սրբատեղի։*

Սուրբ Մինաս եկեղեցի. *Խոզնավար գիւղի յուշարձանների շարքում իր բացառիկ*

---

[1] **Թ. Խ. Յակոբեան**, **Ստ. Տ. Մելիք-Բախշեան**, **Հ. Խ. Բարսեղեան**, Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2. Դ – Կ, 1988, էջ 762:

[2] **Ս. Խանզադեան**, Հայրենապատում, հ. 1, Երեւան, 1980, էջ 469:

[3] **Ս. Սպանդարեան**, Թղթակցութիւններ, Նոր Դար, Թիֆլիս, 1890, հմր 72, էջ 3-4:

[4] Հայաստանի ազգայի արխիւ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ հմր 74, (այսուհետ ՀԱԱ):

տեղն ունի գիւղամիջեան կիսաւեր եռանաւ, բազիլիկ եկեղեցին, որը վնասուել է 1931, ապա 1968 թթ. երկրաշարժերի հետեւանքով։ 1974-ին մեծ հեղեղ է եղել, որի հետեւանքով կրկին փլուզումներ են եղել եկեղեցում[5]։ Եկեղեցու կառուցման եւ անուան հետ կապուած վիմական արձանագրութիւններ չկան (գուցէ փլուածքի տակ են մնացել)։ Գիւղի յուշարձանները վիմագրական տեսանկիւնից երբեւէ չեն քննուել, ուստի եղածը նախկինի հետ համեմատելու հնարաւորութիւն չունենք, որպէսզի հասկանանք որքանով է պահպանուել վիմագրական ատաղձը, հետեւաբար կը բաւարարուենք մեր ձեռքի տակ եղած վիմագրերով՝ փորձելով որոշակի եզրայանգումների գալ։ Տեղացիների վկայմամբ եկեղեցին կոչւում է Սբ. Մինաս, մինչդեռ մատենագիտութեան մէջ այն պահպանուել է Սուրբ Ստեփանոս Նախավկայ անուամբ։ Խոզնավար եւ Խնածախ գիւղերում ընդօրինակուած ձեռագրերը թոյլ են տալիս պնդելու, որ նրանք հանդիսացել են Քաշաթաղ գաւառի գրչօջախներից։ Այսպէս, 1488 թուականի մի Աւետարանում, կարդում ենք. «Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ի թվականութեանս Հայկազեան տումարի ՉԼԷ 1488, ի հայրապետութեան տեառն Սարգսի, ի յաթոռակալութեան Սիւնեաց Որդանան վարդապետի... Եւ գրեցաւ ի գաւառիս Քաշաթաղուց, ի գէղս, որ կոչի Խոզնավար, ընդ հովանեաւ Սուրբ Ստեփանոսի Նախավկայիս...»[6]։

Իսկ Գրիչ Եղիա երեցի ընդօրինակած մյուս Ավետարանում. «Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ի թվականիս ՉԼԹ 1490, ի գաւառիս Քաշաթաղուց, ի գեղոյս, որ կոչի Խոզնավար, ընդ հովանեաւ Սուրբ Ստեփանոս Նախավկայիս և այլ բազմահավաք սրբոցն, որ աստ կան...»[7]։

Մեկ ուրիշ Աւետարանում, որն ընդօրինակել է Միքայէլ Սարկաւագը, կարդում ենք. «Աստուած իւր վարձն հատուցանէ աստ եւ անդ, որ կամակից եղեւ գրելոյ սբ. Աւետարանիս... ի յԱստուածաբնակ եւ յանառիկ դղեակս Քաշթաղ, ի գօղն Խզնավար, ընդ հովանեաւ Սրբոյն Ստեփանոսի Նախավկային... ի թվաբերութեանս Հայոց ՌՃԱ (1652)»[8]։

Այսպիսով, գրաւոր աղբիւրները վկայում են, որ ներկայիս Սբ. Մինաս եկեղեցին նախկինում կոչուել է Սբ. Ստեփանոս Նախավկայ։ Հաւանաբար, այն անուանափոխուել է վերջին նորոգումից յետոյ՝ 1675 թուականին։ Ամէն դէպքում տեղացիներին յայտնի չէ յուշարձանի Ստեփանոս Նախավկայ անուան տարբերակը։ Անուանափոխութեան հանգամանքը հաւանական վերանորոգումից յետոյ հանդիպում ենք նաեւ Ալիշանի հետեւեալ տողերում. «Խոզնավար կամ Խազնավար, գիւղ, որ թեպետ ոչ է յիշեալ ի հին Յուցակին... և ի յիշատակարանի աւետարանի գրելոյ աստ յամի 1490 ասի լինել ի գաւառս Քաշթաղուց և եկեղեցին Սբ. Ստեփանոս Նախավկայ, այժմ սուրբ Մինաս կոչի...»[9] **(Նկ. 1)**։

Ստեփանոս անուան եւս մէկ յիշատակութիւն ենք հանդիպում Ս. Խանզադեանի հետեւեալ տողերում. «1974 -ին մեծ հեղեղ է եղել եւ շատ վնասներ պատճառել գիւղին։ Փլուել է նաեւ Ստեփանոս Նախավկայ եկեղեցին, որ գիւղի մէջ է... Ես ճիգ եմ անում կարդալու հին եկեղեցու մաշուած պատի մաշուած քարերին մնացած գրերը. Սուրբ

---

[5] **Ս. Խանզադեան**, նշ. աշխ., էջ 471։

[6] Ժե դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, մաս 3, կազմեց՝ Լ. Խաչիկեան, Երեւան, 1967, էջ 116։

[7] Նոյն տեղում, էջ 148։

[8] Նոյն տեղում, էջ 506։

[9] **Ղ. Ալիշան**, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 268։

Ստեփանոս Նախավկայ. թվն ՌԾԱ...»[10]*։ Այդ արձանագրութիւնը, սակայն, ներկայումս տեղում չի պահպանուել։*

Նկ. 1 Սուրբ Մինաս

*Խոզնավար գիւղը յիշատակւում է նաեւ Խնածախի նշանաւոր մելիք Հայկազ Բ-ի կնոջ՝ Գուլաբի տապանաքարին պահպանուած արձանագրութեան մէջ. «...*ԳՆԱՑ ԵՒ ՄԵՐ Հ[Ա]ՅՐԵՆԻՔ Մ[ՈՒ]ԼՔԵՐՆ ԱՆԿԵ[Ա]Լ ԷՐ Ի ՁԵՌ[Ա]Յ, Թ[Ա]Գ[ԱՎՈ]ՐԷՆ Ղ[Ա]Բ[Ա]Լ[Ա]Յ ԷԱՌ ԱՅՍՔ[Ա]Ն ԳԵՂԻ: ԽՆ[Ա]Ծ[Ա]Խ, Պ[Ա]Յ[Ա]ՆԴ[ՈՒ]Ր, Խ[Ո]ՁՆ[Ա]Վ[Ա]Ր[11]: *Ինչպէս երեւում է արձանագրութեան տողերից Հայկազի մահից յետոյ նա կարողացել է վերադարձնել ամուսնուց խլուած հայրական ժառանգութիւն մնացած մուլքերը եւ նշուած երեք գիւղերի հողային եւ հարկային իրաւունքներն ու սեփականութիւնը։*

Այժմ ներկայացնենք եկեղեցու ցայժմ անտիպ արձանագրութիւնները.

1. Սիւն. *ընկած եկեղեցու հիւսիսային պատի տակ, երեսին եւ ձախակողմում երկուական տող (**նկ. 2**)։*



ՏՐ
ՂԱՋԱՐ:



Գ ՏՐ
Մ[Ի]Լ[ՔՈՒ]Մ:

Արձանագրութեան մէջ յիշատակուող Տէր Ղազարը Խոզնավար գիւղի, Սբ. Մինաս եկեղեցու քահանայ Տէր Միլքումի որդին է (ով յիշատակւում է նոյն արձանագրութեան մէջ)։ Այս մասին հնարաւոր եղաւ ճշգրտել Հայաստանի ազգային արխիւի ծխական մատեաններից։ Ստորեւ ներկայացնում ենք մի նամակ-խնդրագիր գիւղի ժողովրդի կողմից՝ ուղղուած Տաթեւի հոգեւոր դասին։ Այսպէս.

«10 փետրվրի 1872 ամի

Ի հոգևոր կառվրին հայոց Տաթևու

Ի հայ ազգի ժողովրդոց Խոզնավար գիւղի վիճակին Տաթևու

[10] **Ս. Խանզադեան**, նշ. աշխ., էջ 471:

[11] **Մ. Հասրաթեան**, Պատմա-հնագիտական ուսումնասիրութիւններ, Երեւան, 1985, էջ 164:

Խնտիր.

Մէք իրիսուն պարվան ժողովուրդ իմք, ունիմք մի ծիրունի քահանայ Տր Միլքում Տէր Գրիգորիանց, այժմ յոթանասուն հասակ ունի: Ինքն դադապարդված է ու աչքը լույսից պակասած... Տր Միլքումը այսուհետև ինչպես նկատումիմք վիրատրիալ պատճառներով չէր կարող զմեզ հովիվ անթիրի կիրպիւ ինչպէս մինչ ցայսօր: Սորա հիտ մատուցանիլով յուր հրաժարական թուղթը աղաչիմք, խնդրիմք արժանաւոր տնորենուին ի տիղի քինայի որդի պարզ հոգուորական տրացու Ջազարին, որ հիմա իրիսուն ամայէ, ունի գովիլի վարք, բարք, մշտական սպասաւոր Խ գիւղիս սուրբ Մինաս իկիղիցւոյն, ընդունակ է և արժանի քահանայական աստիճանի: Կատարիլով միր էս խնդրուանքը հոգևոր իշխանութանը ըստ հոգոյս ըստ մարմնոյ կատարիլապէս կմխիթարէ»:

Այնուհետեւ նշում են գիւղացիների անունները, իբրեւ իրենց յօժար կամքով են ստորագրել խնդագրի տակ եւ այսպէս գրում.

«Աշմարիտէ որ յիշիալ անձինք յուրանց յոժար կամոքնին ստորագրիլ, որուն վկայիմք կնիքով ու ստորագրութ. միրով»: ***Տանուտէր:***

Կից ներկայացւում է Միլքում քահանայի հրաժարականի թուղթը: Այսպէս.

Հրաժարական թուխտ

«Էս Խոզնավար գիւղի ծխական Միլքում քինյ Տր Գրիգորիանց այժմ 70 տարիկան անձամբ ցաւաքար, վատատիս, առանց կարողութիւնից ընկած զկնի տասնուհինգ տարի քահանայագործիլաս, նկատում իմ, որ այսուհիտս վիրոգրիալ պատճուառքով չէմ կարող կատարիլապէս անցիալ ժամանակաց նման յառաջ տանիլ իմ հովուական պարտքս համաձայն բարքաւէր ժողովրդոց իմոյ ի Խոզնավար ցանկում Ղազար անուն որդոյ իմոյ ի քահանայ փոխանակ իմ հովու զնույն ժողովուրդն, որ նույն ժողովուրդն հավանի իւր յիշիալ փափականաց յոյնժամ իմ այս ուխտապրուժիամբ պարտաորիմ մինչև ցմահ հրաժարիլ մնալ ի քահանայագործուէ ի հաստատու ի խոստումս ստորագրիմ առաջինն է փետրվարի 1872 ամի ի գիւղն Խոզնավար»[12]:

Նամակի մէջ յստակ յիշատակուող Սբ. Մինաս անուանումը փարատեց եկեղեցու անուան հետ կապուած մեր տարակարծութիւնները: 1872 թուականին տեղի եկեղեցին արդէն յիշատակւում է Սբ. Մինաս, նախկին Ստեփանոս Նախավկայ անուան փոխարէն:

2. Խաչքար. ***ագուցուած եկեղեցու հիւսիսային աւանդատան մուտքի վերնամասում, քիւին եւ ստորին հատուածներում մէկական տող (նկ. 3):***



... ՌՈՍԻՆ



ԹՎ[ԻՆ] ՌԺԷ (1568):

[12] ՀԱԱ, 1849, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 99:

Ծանօթ. *Մասամբ պահպանուած արձանագրութեան սկզբնամասից պարզ է դառնում, որ ՐՈՍԻՆ վերջաւորութիւնը, հաւանաբար, անձնանուան շարունակութիւն է, այն կարող է լինել Մարտիրոս անձնանուան շարունակութիւնը։*

3. Խաչքար. *Հարաւային աւանդատան մուտքի վերնամասում, քանդակազարդ, առանց արձանագրութեան (**նկ. 4**)։*

Պէտք է նկատել, որ զոյգ աւանդատներին ագուցուած խաչքարերն օգտագործուած են որպէս շինաքարեր։

4. Պատրիան *եկեղեցու հարաւային պատին, վերնամասում՝ կամարազարդ քարի գլխամասում՝ մէկ տող (**նկ. 5**)։*

ՄԻՔ[ԱՅԵ]Լ Ք[Ա]Հ[Ա][ՆԱՅ]Ս Յ[Ի]Շ[Ե]Յ[Ե]Ք Ի ՔՍ

5. Խաչքար. *ագուցուած եկեղեցու ենթադրեալ մկրտութեան աւազանի հիւսիսային պատին։ Աւազանի վերնամասում՝ կամարազարդ քարի գլխամասում՝ մէկ տող (**նկ. 6**)։*

ՈՐԴԻ ՍԱՐՈՒ ԹՎ[ԻՆ] ՌՃ (1651):

Ծանօթ. *Մասամբ պահպանուած արձանագրութեան վերծանութիւնը պահպանուել է վիմագրագէտ Գր. Գրիգորեանի դաշտային օրագրերից մէկում*[13]*։*

6. Տապանաքար. *եկեղեցու հարաւային պատի տակ, առանց արձանագրութեան, զարդաքանդակ, թուագրւում է 16-17-րդ դարերով (**նկ. 7**)։*

7. Տապանաքարի բեկոր. *որպէս շինաքար ագուցուած պատի մէջ, վրան՝ ձիաւոր։ Հաշուի առնելով քանդակային մանրամասները, կարելի է ենթադրել, որ դա 13-14-րդ դարերի տապանաքարի բեկոր է, որը բնորոշ է տուեալ ժամանակաշրջանին, յատկապէս Արցախում (**նկ. 8**)։*

8. Արձանագրութիւն. *եկեղեցու հիւսիսային կամարաշարի սեան վրայ երեք տող (նկ. 9)*[14]*։*



Մ[Ա]Ս[Ե]ՀԻ ՈՐԴ[Ի] ՏԱՆՏԷՍԻՍ
ՈՐ Է ՍԱՐԳԸՍԸԵՆՅՍ ԶԻՇ[Ե]Յ[Ե]Ք Ի ՔՍ

Սբ. Հռիփսիմէ եկեղեցի: *Եկեղեցու գոյութեան մասին տեղեկանում ենք ինչպէս բանաւոր, այնպէս էլ սակաւ պահպանուած գրաւոր աղբիւրներից։ Յայտնի է, որ այն*

[13] **Գր. Գրիգորեան**, դաշտային օրագիր (պահւում է Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի արխիւում) էջ 52:
[14] Լուսանկարը՝ Խոզնավար գիւղի միջնակարգ դպրոցի ուսմասվար՝ Յարութիւն Անդրիյեանի:

հիմնովին քանդուել է 1935 թուականին, որի տեղում դպրոց է կառուցուել։ Գիւղի ներկայիս դպրոցի ուսմասվար Յարութիւն Անդրիյեանի խօսքով Սբ. Հռիփսիմէ եկեղեցու տեղում կառուցուած դպրոցն այժմ չի գործում, սակայն շինութիւնը պահպանուել է։ Նշում է նաեւ, որ շէնքի պատերի մէջ՝ թափուած ծեփի տակ, նշմարւում են խաչքարի եւ տապանաքարերի բեկորներ, որոնք թոյլ են տալիս ենթադրելու, որ դպրոցը կառուցելու ժամանակ եկեղեցու քարերի մեծ մասն օգտագործուել են որպէս շինաքար։

Եկեղեցու տեղում կառուցուած դպրոցը։

Գերեզմանատուն. *19-րդ դար. գտնւում է գիւղի հիւսիս արեւելեան մասում։ Ուշագրաւ են գերեզմանատան տապանաքարերի քանդակները (**նկ. 10, 11**)։*

Խաչեր սրբատեղի: *Գտնւում է գիւղից մօտ երկու կիլոմետր արեւմուտք՝ սարալանջի վրայ։ Թարմ մոմի հետքերը, ինչպէս նաեւ տարածքի խնամուած լինելը թոյլ է տալիս ենթադրելու, որ սրբավայրը այցելուների ուշադրութեան եւ հոգացութեան կենտրոնում է (**նկ. 12**)։*

Թեւաւոր խաչքար. *գտնւում է գիւղից 300 մ հիւսիս-արեւմուտք՝ Բազարխանա կոչուող վայրում (նկ. 13)։*

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ գիւղի եկեղեցին մինչեւ 17-րդ դարի կէսը, հաւանաբար, եղել է վանք եւ հանդիսացել է գրչութեան կենտրոն։ 17-18-րդ դարերում անուանափոխուել է Սբ. Ստեփանոսից Սբ. Մինասի՝ վերածուելով ծխական եկեղեցու։ Քաշաթաղի շրջանի արձանագրութիւնները, յատկապէս ուշ միջնադարեան հերթական անգամ հերքում են Քաշաթաղի 17-18-րդ դարերում իսպառ հայաթափուած լինելու հանգամանքը։ Ուստի շրջանի վիմագրերի ուսումնասիրութիւնը կրկին ապացուցում է Քաշաթաղի բնիկ հայկական լինելու փաստը։ Ամփոփելով նշենք, որ եկեղեցու տարածքում՝ փլուածքի տակ, պահպանուել են տասնեակ տապանաքարերի բեկորներ։ Եկեղեցին եւ շրջակայքը կարօտ են մանրազննին հետազօտութեան, ինչի շնորհիւ ի յայտ կը գան նոր վիմագրեր, որոնք կ՚ամբողջացնեն մեր ուսումնասիրութիւնը։

նկ. 2

նկ. 3

նկ. 4

նկ. 5

նկ. 6

նկ. 7

նկ. 8

նկ. 9

նկ. 10, 11

նկ. 12

նկ. 13

ՍԱԹԵՆԻԿ ԽՈՒՐՇՈՒԴԵԱՆ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ